# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

«27» հուլիսի 2016թ. N 92-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 625-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 625-Ա հրամանի 1-ին կետով ստեղծված հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողովի կազմը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

1) Արմեն Գևորգյան- հանձնաժողովի նախագահ (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ).

2) Լալա Անանիկյան - հանձնաժողովի անդամ (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության պետ).

3) Դավիթ Համբարձումյան - հանձնաժողովի անդամ (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային

ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ).

4) Արմեն Գաբրիելյան- հանձնաժողովի անդամ (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ).

5) Արմեն Մելկիկյան - հանձնաժողովի անդամ (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ).

6) Արշալույս Մարգարյան - հանձնաժողովի անդամ (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության պետ).

7) Գյուլնարա Գրիգորյան - հանձնաժողովի անդամ (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ).

8) Գրետա Աղամյան - հանձնաժողովի քարտուղար (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի մակրոտնտեսական քաղաքականության վարչության արտաքին հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ-վարչության պետի տեղակալ):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ